

ՏԱՐԱԾՔ ԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ



ԱՇՈՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի
դրոցենտ, տնտեսագիտության թեկնածու*

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ

ՄԻՈՒԹՅՈՒՆ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԵ՞ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՓԱԿՈՒԴԻ

Հետխորհրդային տնտեսությունների զարգացման վրա Մաքսային միության ազդեցության վերաբերյալ կարծիքները նորմատիվային բնույթ ունեն և հանգում են երկու հիմնական մոտեցման. առաջին՝ դա տնտեսապես շահավետ է բոլոր անդամակցողների համար, երկրորդ՝ չի կարող բոլորի համար տնտեսապես շահավետ լինել: ՌԴ Գիտությունների ակադեմիայի ժողովրդական տնտեսության ինստիտուտի կողմից իրականացված հետազոտության հիմնական եզրակացությունը հետևյալն է. Մաքսային միության ստեղծումը դրական էֆեկտ կունենա՝ շնորհիվ մասնակից երկրների վերամշակող արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի շուկաների ընդլայնման, որոնք ներկա պահին մրցունակ չեն արտաքին շուկաներ դուրս գալու համար¹: Իսկ ահա ըստ հետխորհրդային տարածքում Մաքսային միության տարբերակով տարածաշրջանային տնտեսական միասնացման արդյունավետության մասին Համաշխարհային բանկի հետազոտություններից մեկի՝ այդ միությունը ոչ միայն շոշափելի արդյունքներ չի ապահովի մասնակից պետությունների համար, այլև երկարաժամկետ հեռանկարում կխոչընդոտի արտադրությունում նոր տեխնոլոգիաների օգտագործմանը²: Հետազոտության հեղինակների կարծիքով՝ Մաքսային միությունից բխող ստատիկ էֆեկտները

¹ Տե՛ս **Клоцвог Ф., Сухотин А., Чернова Л.**, Прогнозирование экономического развития России, Беларуси, Казахстана и Украины в рамках Единого экономического пространства, Институт народнохозяйственного прогнозирования РАН, 2009, URL: <http://www.ecfor.ru/pdf.php?id=2009/4/02>

² Տե՛ս **Michalopoulos C., Tarr D.**, Are Customs Unions Economically Sensible in the Commonwealth of Independent States // World Bank Publications, 2004, URL: http://siteresources.worldbank.org/INTRANETTRADE/Resources/Tarr_Michalopoulos_Customs_Unions_eng.pdf

կարող են տարբեր լինել, բայց այն պետությունները, որոնք միության կազմավորման պահին ունեցել են ավելի լիբերալ տնտեսություններ, կտուժեն: Այս եզրակացությունները կատարվել են ըստ Մաքսային միության տեսության հիմնական դրույթների:

Մեր մոտեցումը նույնպես նորմատիվային բնույթ ունի: Մենք նախևառաջ կփորձենք բացահայտել Եվրասիական միության ստեղծման նպատակները, հետո ներկայացնել Մաքսային միության կայացման և ընդլայնման կառուցվածքային, առևտրային և ինստիտուցիոնալ խոչընդոտները, ապա գնահատել այդ տարածաշրջանային միավորման ներուժը գերիշխող մոդելի և ապահովագրման գործոնների ազդեցության տեսանկյունից:

Եվրասիական միությունը և դրա նպատակները

Անցած ավելի քան քսան տարիների ընթացքում հետխորհրդային տարածքում ձևավորվել են բազմաթիվ տարածաշրջանային միավորումներ, որոնք գործել և գործում են տարբեր, սակայն, ընդհանուր առմամբ, ցածր արդյունավետությամբ: Ընդ որում, մենք ոչ միայն հետխորհրդային երկրների միջև միասնացման ամրապնդման ինստիտուցիոնալ օրինակների (ԱՊՀ, ՎՈՒԱՄ, ներկայումս գոյություն չունեցող Համագործակցության Կենտրոնասիական կազմակերպություն³, ԵվրԱզԵՍ⁴ և այլն), այլև դրանց և այդ տարածքից դուրս այլ պետությունների հետ տարածաշրջանային ինստիտուտների ստեղծման գործընթացների (Տնտեսական համագործակցության սևծովյան կազմակերպություն, Համագործակցության շանհայյան կազմակերպություն և այլն) ականատեսն ենք եղել:

Ներկայումս հետխորհրդային տարածքի սահմաններում տարածաշրջանային միավորման ստեղծման ամենաարդիական նախագիծը կապված է Եվրասիական միության⁵ ձևավորման հետ: Հարկ է նշել, որ թե՛ ԵվրԱզԵՍ-ում և թե՛ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում⁶ երկրների շահերի համաձայնեցման մեխանիզմները հիմնված են քվեարկության սկզբունքի վրա: Գործում է, այսպես կոչված, «հավասարակշռված» քվեարկության սկզբուն-

³ 1990-ական թվականներին, երբ Կենտրոնական Ասիայի պետությունների ղեկավարները հայտարարեցին առանց արտաքին խաղացողների (օրինակ՝ Ռուսաստանի և Չինաստանի) Կենտրոնասիական տարածաշրջանային ինտեգրման ինստիտուտ ստեղծելու մտադրության մասին, քաղաքական և ակադեմիական շրջաններում շատերը սկսեցին խոսել Կենտրոնասիական *ռեգիոնալիզմի* մասին: Սակայն մեկ տասնամյակ տևած քննարկումներից հետո այս թեման այլևս չարժարժվեց, քանի որ այդ միասնացումը տեղի չունեցավ:

⁴ ԵվրԱզԵՍ-ի հիմնադրման պայմանագիրը ստորագրվել է 2000 թ. հոկտեմբերի 10-ին Աստանայում: ԵվրԱզԵՍ-ի անդամներ են Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը և Տաջիկստանը: Դիտորդ երկրներ են համարվում Մոլդովան, Ուկրաինան և Հայաստանը: Աստիճանաբար կազմակերպությունը սկսեց զուգորդվել ընդհանուր շուկա կառուցելու և մաքսային միություն ստեղծելու նպատակի հետ:

⁵ 2010 թ. դեկտեմբերին ԵվրԱզԵՍ-ի գագաթնաժողովում, Մաքսային միության կազմավորումից հետո, պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Եվրասիական միություն ստեղծելու վերաբերյալ: Եվրասիական ինտեգրման հռչակագրին համապատասխան պլանավորվում է մինչև 2015 թ. հունվարի 1-ը ստեղծել Եվրասիական տնտեսական միություն: Այնուհետև ԵվրԱզԵՍ-ի, Միասնական տնտեսական տարածքի, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) և Մաքսային միության հիման վրա նախատեսվում է ստեղծել Եվրասիական միություն:

⁶ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ստեղծվել է Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի գործունությունն ու զարգացումը ապահովելու համար: Այն դարձավ Մաքսային միության հանձնաժողովի իրավահաջորդը (Մաքսային միության հանձնաժողովի գործունեությունը դադարեցվել է 2012 թ. հուլիսի 1-ին):

քը, որի համաձայն՝ յուրաքանչյուր երկիր կազմակերպության բյուջեում, իր բաժնային ներդրմանը համապատասխան, ունի ձայնի իրավունք: Այսպես՝ ԵվրԱզԵՄ-ի պարագայում Ռուսաստանն ունի ձայների 40%-ը, Բելառուսը և Ղազախստանը՝ յուրաքանչյուրը 15%, Ղրղզստանը և Տաջիկստանը՝ յուրաքանչյուրը 7,5%: Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ձայները բաշխված են հետևյալ համամասնությամբ. Ռուսաստան՝ 57%, Ղազախստան և Բելառուս՝ յուրաքանչյուրը 21,5%: Ինչպես տեսնում ենք, որոշումների ընդունման հարցում Ռուսաստանն ունի գերիշխող ձայն, ինչն ինքնին վանող հանգամանք է հետխորհրդային տարածքում միասնացման ցանկացած գործընթացի պարագայում:

Մյուս կողմից՝ Եվրասիական միությունը չի ենթադրում միայն տնտեսական միասնացում: Ի սկզբանե հայտարարված է, որ այն դառնալու է քաղաքական միություն, իսկ Մաքսային միությունը նախնական փուլերից մեկն է:

Քաղաքական ռեալիզմի տեսանկյունից Եվրասիական միության ստեղծումը մի նախագիծ է, որի միջոցով Ռուսաստանը փորձում է մեծացնել իր քաղաքական և տնտեսական ազդեցությունը հետխորհրդային տարածքում: Այսինքն՝ Եվրասիական միության ստեղծումը Մոսկվայի արտաքին քաղաքականության շարունակությունն է՝ որպես «փափուկ ուժի» գործիքակազմի ավելացում հետխորհրդային տարածքում սեփական շահերի առաջնորդման համար:

Ռուս հետազոտողները և նախագծողները Եվրասիական միության ձևավորման գործընթացը դիտում են համընդհանրական տարածքային համատեքստում, ինչը, նրանց կարծիքով, «փոխում է աշխարհի և աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական կառուցվածքը»⁷: Նրանք որպես հիմք են ընդունում այն ենթադրությունը, թե ժամանակակից համաշխարհային տնտեսությունում աճում են ճգնաժամային երևույթները, որոնք կրում են ինչպես կառուցվածքային, այնպես էլ համակարգային բնույթ: Եթե մինչև վերջերս միջազգային հարաբերություններում կարգավորիչի դերը կատարում էր ԱՄՆ-ը, ապա այժմ նա հիմնականում կորցրել է իր առաջատար դիրքը, և դեռ չկա տերություն կամ տերությունների դաշնադրություն (կոալիցիա), որը կկարողանա առաջարկել աշխարհակարգի իր մոդելը և խաղի իր կանոնները: Կարգավորման գործառնություն պատրաստ չեն նաև միջազգային ինստիտուտները՝ ՄԱԿ-ը, ԱՄՀ-ն, Համաշխարհային բանկը, որոնք լուրջ բարեփոխման կարիք ունեն: Ժամանակակից աշխարհն այսօր ո՛չ միաբևեռ է, ո՛չ էլ բազմաբևեռ. այստեղ կան մեծ թվով սուբյեկտներ, որոնք ունեն վիթխարի ֆինանսական և կազմակերպական ռեսուրսներ, բայց չեն կրում որևէ համընդհանրական կամ սոցիալական պատասխանատվություն: Համաշխարհային տնտեսության հիմնական սուբյեկտներ են դառնում խոշոր անդրազգային կորպորացիաները և բանկերը, որոնց սուբյեկտությունը յուրահատուկ է: Որպես այդ ամենի հետևանք.

- տեղի է ունենում միջազգային պատասխանատվության թուլացում համաշխարհային մակարդակում, և այսօր պարզ չէ՝ ով և ինչպիսի պատասխանատվություն կկրի ավելի բարդ մարտահրավերների և ռիսկերի համար,

- միջազգային հարաբերությունների գոյություն ունեցող կարգավորիչների թուլացմանը և նոր համակարգի կայուն մեխանիզմների բացակայու-

⁷ Տե՛ս **Абрамов Ю.**, Глобальная регионализация: к обоснованию понятия. „Социально-гуманитарные знания“, № 1, 2008, էջ 242–250:

թյանը զուգահեռ աճում են անորոշությունը և անվստահությունը, փոխադարձ թշնամանքը և համապարփակ մրցակցությունը,

– աշխարհն անցնում է նոր ուժերի անկայուն հաշվեկշռի, նոր կարգի, որի էությունը և հետևանքներն ամենևին էլ պարզ չեն:

Ելնելով վերը նշված իրողություններից և միտումներից՝ կարևորվում է երկարաժամկետ հայեցակարգային մոտեցման մշակումը, որն ընդունակ է կերպափոխվելու լիարժեք համընդգրկուն ռազմավարության, որում հաշվի կառնվեն համաշխարհային տնտեսության գլխավոր առանձնահատկությունները: Ենթադրվում է, որ այդ ամենն իր դրսևորումը կգտնի Եվրասիական աշխարհանախագծում: Դա ոչ այնքան միասնական ռազմավարական տարածության ստեղծում է, որքան կառավարման միջպետական համակարգի ձևավորում Եվրասիական տարածաշրջանի մասշտաբով, որը նպատակ ունի դառնալու ձևավորվող համաշխարհային կառավարման համակարգի կարևոր մասը⁸:

Եվրասիական միության ստեղծման տնտեսական դրդապատճառները կապված են Ռուսաստանի աշխարհատնտեսական նպատակների հետ: Արևմտյան երկրների և Չինաստանի կողմից տնտեսական էքսպանսիայի ամրապնդումը Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից հետխորհրդային կարևոր տարածաշրջանում պահանջում է Ռուսաստանի համարժեք տնտեսական արձագանք⁹: Տնտեսական դրդապատճառներն ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

– Հետխորհրդային երկրներն ունեն նավթի և գազի, ինչպես նաև այլ օգտակար ռեսուրսների զգալի պաշարներ: Ածխաջրածինների համաշխարհային շուկաների վերլուծությունը, սեփական պահանջմունքների և արտահանման պարտավորությունների սթափ գնահատումն ու արտահանման արդեն իսկ ձեռք բերված պարտավորությունները ռուսական ընկերություններին մղում են այդ երկրներում նավթի և գազի արդյունահանման ուղղությամբ ջանքերի ակտիվացման:

– Նշյալ երկրներն ունեն արագ աճող բնակչությամբ և ռեսուրսների արտահանումից ավելացող եկամուտներով ներքին շուկաներ, ինչը դրանք գրավիչ է դարձնում ռուսական սպառողական ապրանքներ արտադրող և ծառայություններ մատուցող ընկերությունների համար: Գործնականում հենց այս երկրներում կարող է իրացվել ռուսական մեքենաշինական ճյուղի դեռևս գործող արտադրությունների արտադրանքը՝ նպաստելով Ռուսաստանի արտահանման կառուցվածքի բարելավմանը, ինչպես նաև հնարավորություններ ստեղծելով միջպետական արտադրական կոոպերացիայի զարգացման համար:

– Աշխատանքային ռեսուրսների մեծ ներուժը նախադրյալ է ստեղծում տարածաշրջանում աշխատատար արտադրությունների տեղայնացման համար, որոնք կողմնորոշված կլինեն Ռուսաստան արտահանմանը:

– Հետխորհրդային երկրները Ռուսաստանի համար կարևոր տարանցիկ նշանակություն ունեն, ինչպես նաև կարող են յուրահատուկ կամուրջ դառնալ այլ տարածաշրջանների երկրների հետ նոր կապերի ստեղծման գործում:

⁸ Стѹ Васильева Н., Лагутина М., Формирование Евразийского Союза в контексте глобальной регионализации. „Евразийская экономическая интеграция“, № 3 (16), 2012, էջ 23:

⁹ Стѹ Хейфец Б., Российские прямые инвестиции в ЕвразЭС и их роль в развитии энергетики и транспортной инфраструктуры на евразийском пространстве. „Евразийская экономическая интеграция“, №1 (2), 2009, էջ 29:

Մաքսային միության կայացման և ընդլայնման խոչընդոտները

Ընդհանուր առմամբ, Մաքսային միության ձևավորման հիմքում ընկած են մի շարք միասնացնող (ինտեգրող) տարրեր: Դրանցից նախևառաջ հարկ է առանձնացնել ռուսական նավթագազային, մետալուրգիական և հեռահաղորդակցային ընկերությունների ակտիվ էքսպանսիան հետխորհրդային երկրներում¹⁰: Վերջին տասը տարիների ընթացքում այդ ընկերություններն ակտիվորեն գրավել են հետխորհրդային տարածաշրջանի համապատասխան շուկայական հատվածները՝ ձեռք բերելով ակտիվներ և ստեղծելով համատեղ ձեռնարկություններ: Ընդ որում, ռուսական ընկերությունների ներդրումային էքսպանսիան միայն մասնակիորեն է հաշվի առնվում պաշտոնական վիճակագրությունում, քանի որ դրանց կողմից հաճախ օգտագործվում են օֆշորային սխեմաներ: Հետխորհրդային տարածաշրջանում երկրորդ միասնացնող տարրը դեռևս պահպանված միասնական ենթակառուցվածքն է (էլեկտրաէներգետիկա¹¹ և երկաթուղային տրանսպորտ¹²): Որոշակի առումով, տարածաշրջանային ինտեգրացիան խարսխված է նաև աշխատանքային միգրացիայի վրա: Ռուսաստանը փորձում է իր տարածքում իրականացնել համատեղ նախագծեր գյուղատնտեսության և փայտի վերամշակման ոլորտներում և այդպես դասնակիորեն միգրացիոն հոսքերն ուղղել երկրի արևելյան շրջաններ: Դեռևս պահպանվել են միջանձնական ցանցերի և ռուսերենի՝ որպես lingua franca-ի օգտագործման վրա հիմնված սոցիալական միասնացման զգալի տարրեր:

Նշված նախադրյալները, սակայն, բավարար չեն ամուր և կայուն տարածաշրջանային միավորում ստեղծելու համար: Նախ հարկ է նկատել, որ, ռուսական ընկերություններից բացի, տարածաշրջանի երկրներում ակտիվորեն գործում և ամուր դիրքեր են զբաղեցնում արևմտյան պետությունների, Չինաստանի, նաև Թուրքիայի, Իրանի և այլ երկրների ընկերությունները: Երկրորդ՝ տվյալ տարածքում էներգետիկայի և տրանսպորտի երբեմնի միասնական ենթակառուցվածքը վերջին քսան տարիներին ֆիզիկապես և բարոյապես մաշվել է, ստեղծվել են ազգային էլեկտրաէներգետիկայի ճյուղերի և շուկաների կազմակերպման տարբեր ձևեր, կառուցվել են տարածաշրջանը այլ երկրների հետ կապող երկաթուղային և ավտոմոբիլային նոր ճանապարհներ: Այդ ամենը էապես խարխլել են ենթակառուցվածքների ոլորտում Ռուսաստանի նախկին մենաշնորհային դիրքերը: Բացի այդ, գոյություն ունեն միասնացման գործընթացը խոչընդոտող բազմաթիվ պատճառներ: Այս հիմնախնդրով զբաղվող ռուս հեղինակները հիմնականում նշում են երեք խումբ պատճառներ.

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 27-41:

¹¹ Տե՛ս **Волкова Е., Захаров А., Подковальников С., Савельев В., Чудинова Л.**, Электроэнергетическая кооперация на постсоветском пространстве. „Евразийская экономическая интеграция“, №3 (12), 2011:

Винокуров Е., Общий электроэнергетический рынок СНГ как инструмент экономического развития и региональной интеграции. „Евразийская экономическая интеграция“, №3 (12), 2011, №1, 2008, էջ 54-75:

¹² Տե՛ս **Щербанин Ю.**, ЕврАзЭС: транспортный обмен и позиционные составляющие (էջ 111-119), **Рахматулина Г.**, Основные проблемы и перспективы интеграционного сотрудничества государств СНГ в области транспорта (էջ 119-130), **Джадралиев М.**, Транзитный потенциал ЕврАзЭС и региональная транспортная интеграция (էջ 130-141). „Евразийская экономическая интеграция“, №2 (3), 2009:

- հետխորհրդային պետությունների ազգային տնտեսությունների կառուցվածքների առանձնահատկությունները,
- դրանց միջև առևտրատնտեսական համագործակցության մակարդակի նվազումը,
- այդ երկրներում իրականացվող տնտեսական ռազմավարությունների և տնտեսական զարգացման ազգային մոդելների ինստիտուցիոնալ տարբերությունները:

Հետխորհրդային երկրների տնտեսություններում հիմնականում արդյունահանող ճյուղերի զերիշխումը տնտեսական համակարգերը զրկում է փոխլրացման գործառույթներից: Այլ կերպ ասած՝ միասնացումը տնտեսության այդպիսի կառուցվածք ունեցող երկրների համար դառնում է անհիմաստ: ԽՍՀՄ փլուզումից հետո արտաքին առևտրաշրջանառության ծավալները նորանկախ պետությունների միջև դրսևորել են իջեցման ընդհանուր միտում, այսինքն՝ տեղի է ունեցել առևտրային ապամիասնացում: Փոխարենը ավելացել են արտաքին դերակատարների հետ (ԵՄ, Չինաստան, ԱՄՆ, մասամբ՝ Թուրքիա և Իրան) առևտրի ծավալները, ինչը, ըստ էության, տրոհում է միասնացման տարածքը: Դրա մասին են վկայում հետխորհրդային երկրներից Ռուսաստան և ԱՊՀ երկրներ, ինչպես նաև Ռուսաստանից հետխորհրդային երկրներ արտահանման (ներմուծման) զգալիորեն ավելի փոքր ծավալները հեռավոր արտասահմանի երկրներ արտահանման (ներմուծման) ծավալների համեմատությամբ (աղյուսակներ 1 և 2):

Աղյուսակ 1

Հետխորհրդային երկրներից ապրանքների արտահանումը և ներմուծումը ըստ ԱՊՀ և հեռավոր արտասահմանի երկրների (2011 թ.)*

Երկիր	Արտահանում				Ներմուծում			
	ԱՊՀ երկրներ		Հեռավոր արտասահմանի երկրներ		ԱՊՀ երկրներ		Հեռավոր արտասահմանի երկրներ	
	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%
Ադրբեջան	2 924,4	11.0	23 646,5	89.0	2 553,5	26.2	7 202,5	73.8
Հայաստան	263,2	19.8	1 066,3	80.2	1 210,1	29.1	2 941,4	70.9
Բելառուս	19 503,3	48.4	20 790,7	51.6	28 086,6	61.4	17 660,5	38.6
Ղազախստան	12 883,3	16.5	75 389,3	83.5	19 769	52.1	18 171,2	47.9
Ղրղզստան	1 023,8	45.6	1 222,6	54.4	2 178,1	51.1	2 083,1	48.9
Մոլդովա	919,3	41.5	1 297,5	58.5	1 713,4	33.0	3 477,9	67.0
Ռուսաստան	78 705,1	15.2	437 775,8	84.8	44 587,9	14.6	261 016,6	85.4
Տաջիկստան	180	14.3	1 076,9	85.7	1 829,6	57.4	1 356,8	42.6
Ուկրաինա	26 178,7	38.3	42 231,2	61.7	37 212,4	45.0	45 394,5	55.0
ԱՊՀ բոլոր երկրներ	142 581,0	19.1	604 496,8	80.9	139 140,6	27.9	359 304,5	72.1
Վրաստանի, Ուզբեկստանի և Թուրքմենիայի արտաքին առևտրաշրջանառությունը ԱՊՀ և այլ երկրների հետ								
Վրաստան	1 053,0	48.1	1 136,0	51.9	1 942,0	27.5	5 116,0	72.5
Ուզբեկստան	6 720,0	44.7	8 307,0	55.3	4 390,0	41.8	6 120,0	58.2
Թուրքմենստան**	3317,1	34.2	6382,9	65.8	1398,4	17.1	6801,6	82.9

* Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

** Բերված են 2010 թ. տվյալները:

Աղյուսակ 2

Ռուսաստանի արտաքին առևտուրը հետխորհրդային և հեռավոր արտասահմանի երկրների հետ (2011 թ.)*

Երկիր	Արտահանում		Ներմուծում	
	մլն դոլար	% ընդհանուրի նկատմամբ	մլն դոլար	% ընդհանուրի նկատմամբ
Հետխորհրդային երկրների հետ, ընդամենը	78260	13.5	44300	12.9
Ադրբեջան	2505	0.430	572	0.167
Հայաստան	785	0.135	209	0.061
Բելառուս	24923	4.287	13685	3.993
Վրաստան	247	0.042	39	0.011
Ղազախստան	12907	2.220	6859	2.001
Ղրղզստան	1160	0.199	293	0.085
Մոլդովա	1484	0.255	469	0.137
Տաջիկստան	720	0.124	90	0.026
Թուրքմենստան	1160	0.199	143	0.042
Ուզբեկստան	2107	0.362	1860	0.543
Ուկրաինա	30510	5.248	20121	5.870
Հեռավոր արտասահմանի երկրների հետ, ընդամենը	503133	86.5	298454	87.1
Ընդամենը	581393	100	342754	100

* Հաշվարկները կատարել է հեղինակը՝ Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության տվյալների հիման վրա:

Ինչպես տեսնում ենք, հետխորհրդային երկրների արտահանման մեծ մասը բաժին է ընկնում հեռավոր արտասահմանի երկրներին: Ռուսաստանում այդ երևույթն առավել ակնհայտ է. հեռավոր արտասահմանի երկրներին բաժին է ընկնում արտահանման և ներմուծման 85%-ից ավելին: Հետխորհրդային երկրների կշիռը Ռուսաստանի արտաքին համախառն ապրանքաշրջանառության մեջ, 2011 թ. արդյունքներով, կազմում է ընդամենը 13,3%:

Փոխադարձ առևտրի կրճատմանը նպաստել է այդ երկրների ապրանքների մրցունակության նվազումը երրորդ երկրների ապրանքների համեմատությամբ: Հետխորհրդային երկրների միջև առևտրային փոխանակման առարկա են հիմնականում վառելիքը, հումքը, սննդամթերքը կամ պարզ սպառողական ապրանքները, որոնց միասնացման էֆեկտը փոքր է: Միաժամանակ, զգալիորեն կրճատվել են մեքենաշինական համալիրի ներտարածաշրջանային առևտրի ծավալները: Մեքենաշինական արտադրանքի գների աճը հետ է մնում վառելիքահումքային ճյուղերի արտադրանքի գներից: Արդյունքում մեքենաների և տրանսպորտային միջոցների մասերի և բաղադրիչների կոոպերացիոն մատակարարումների կշիռը ներտարածաշրջանային առևտրի ընդհանուր ծավալում կրճատվել է 8,3%-ից մինչև 6,3%, որը 2-3 անգամ փոքր է, քան Եվրոմիությունում և NAFTA-ում, 6 անգամ փոքր, քան ASEAN-ում¹³: Ղա նշանակում է, որ միասնացման ամենաարդյունավետ գոր-

¹³ Стів ШИШКОВ Ю., Кооперирование в машиностроении стран СНГ: не расширение, а свертывание. „Евразийская экономическая интеграция“, №1, 2008, էջ 51:

ծոնը ոչ միայն չի զարգանում, այլև ընդհակառակը, թուլանում է: Հարկ է նշել, որ Եվրոմիությունը, NAFTA-ն և ASEAN-ը, որպես միասնացման հանրություններ, հաջողության են հասել հենց այդ հենքի վրա:

Հետխորհրդային տարածաշրջանում մեքենաշինական համալիրի վերականգնման բոլոր նախկին փորձերը, այդ թվում՝ ռազմարդյունաբերական համալիրում, էական հաջողություն չեն արձանագրել: Օրինակ՝ 1993-1994 թթ. Ռուսաստանը պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների արտադրական և գիտատեխնիկական կոոպերացման երկկողմանի պայմանագրեր է կնքել Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Հայաստանի և Տաջիկստանի հետ: Կոոպերացման պայմանագրեր են կնքվել նաև ինքնաթիռաշինության և բարձրտեխնոլոգիական այլ ոլորտներում: Սակայն իրական համագործակցություն և կոոպերացում այդպես էլ տեղի չի ունեցել:

Հետխորհրդային երկրներից ԱՀԿ անդամներ են Ղրղզստանը, Հայաստանը, Վրաստանը, Ուկրաինան և Ռուսաստանը: Ադրբեջանը, Ղազախստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը դիտորդի կարգավիճակ ունեն այդ կազմակերպությունում: Եվ միայն Թուրքմենստանն է, որ զգալի սահմանափակումներ ունի ԱՀԿ-ին անդամակցելու հեռանկարի առումով: Ռուսաստանը կցանկանար, իհարկե, որ Մաքսային միության ապագա անդամ երկրները ԱՀԿ մտնեին միայն այդ կազմակերպությանը իր անդամակցությունից հետո (ենթադրվում էր, որ երբ սկսեր գործել Մաքսային միությունը, արդեն վերջինիս կազմում ԱՀԿ կընդունվեին մյուս մասնակից պետությունները)՝ այդ երկու կառույցների հարաբերությունների բարդություններից խուսափելու համար: Այս հարցում Ռուսաստանը նույնիսկ որոշակի պայմանավորվածություններ է ունեցել հետխորհրդային հանրապետություններից մի քանիսի հետ 1990-ական թվականների կեսերին: Սակայն Ղրղզստանը 1998 թ. խախտելով պայմանավորվածությունը՝ դարձավ ԱՀԿ անդամ: Հետխորհրդային տարածաշրջանի երկրները տարբերվում են նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների տեմպերով, ուղղություններով և որդեգրած կուրսով, ինչը գրավչության տարբեր միջավայրեր է ստեղծում: Այսպես՝ Հայաստանը, Վրաստանը, Ուկրաինան և Ղրղզստանը իրականացնում են համեմատաբար ազատական տնտեսական քաղաքականություն: Հայաստանը և Վրաստանը տնտեսական ինստիտուտների որակին առնչվող շատ վարկանիշերի գծով առաջատար են հետխորհրդային տարածքում: Իսկ ահա Բելառուսը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը կիրառում են տնտեսական վերափոխումների էտատիստական մոդելներ: Ռուսաստանը, Ղազախստանը, Ադրբեջանը և Տաջիկստանը իրականացրել են «չափավոր» ազատական բարեփոխումներ: Բացի այդ, Ռուսաստանը, Ղազախստանը և Ադրբեջանը էներգակիրներ արտահանող երկրներ են, ինչն իր արտացոլումն է գտնում պետական կառավարման համակարգի վրա:

Արդյունքում ձևավորվել է տարբեր տնտեսական և ինստիտուցիոնալ համակարգերից կազմված յուրահատուկ խճանկար, ինչը խոչընդոտում է միասնական առևտրային և տնտեսական քաղաքականության մշակմանը՝ այդպերպ լուրջ խոչընդոտներ ստեղծելով միասնացման, մասնավորապես՝ Մաքսային միության ձևավորման ճանապարհին:

Բացի վերոնշյալ խոչընդոտներից, որոնք տնտեսական բնույթի են, կան նաև միասնացման գործընթացներն արգելակող քաղաքական բնույթի հան-

զամանքներ՝ ժողովրդավարության պակաս, քաղաքական համակարգում ներքին զսպման և հակակշռման մեխանիզմների բացակայություն, որոշումների ընդունման ոչ թափանցիկ եղանակներ և այլն: Այս ամենը նվազեցնում է երկրների փոխվստահության աստիճանը, որի հետևանքով բազմաթիվ «ոչ շահավետ» պայմանավորվածություններ մնում են անկատար, և իրականի փոխարեն գործ ենք ունենում «թղթային» միասնացման հետ: Ռուսաստանի և ԵվրԱզԵՍ-ի երկրների միջև համագործակցությունը զարգանում է հատուկ կանոններով, երբ որոշիչ գործոն են դառնում պետությունների ղեկավարների անձնական պայմանավորվածությունները և հարաբերությունները: Իսկ այդպիսի պայմանավորվածությունները սովորաբար թելադրվում են ոչ թե արդիականացման միտումներով, այլ իշխանության կառուցվածքներին մոտ կանգնած առանձին ընկերությունների լոբբիստական հնարավորություններով¹⁴:

Եվրասիական միասնացման մոդելը

Եվրասիական միությունը չի կարող կայանալ ոչ միայն այն պատճառով, որ գոյություն ունեն միասնացման բազմաթիվ օբյեկտիվ խոչընդոտներ, այլև այն պարզ պատճառով, որ այդպիսի միավորումը գործելու համապատասխան ներուժ չունի: Ժամանակակից աշխարհում առկա միասնացման մի շարք մոդելներ տարբեր աստիճանով հակված են «կեղծ ինտեգրման» ձևավորման՝ տարբեր նպատակներով դրա գործընթացի նմանակման, որը չի հանգեցնում իրական միասնացած տարածության կազմավորման: Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ եվրասիական միասնացումը նույնպես կեղծ ինտեգրացիաների շարքից է: ՂԺվար չէ նկատել, որ դրան բնորոշ է արտաքին քաղաքական հռետորաբանությունը, երբ իշխող վերնախավը և ընդդիմությունը դա օգտագործում են ներքին քաղաքական պայքարում: Մյուս կողմից՝ միասնացման գործընթացի նմանակումը կորպորացիաների ձեռքին գործիք է կառավարությունից ռեսուրսներ և լրահատկացումներ ստանալու, իմիջի բարելավման, կառավարման քաղաքական հավակնությունների ապահովման կամ նույնիսկ երրորդ երկրներին հնարավոր մրցակիցներից պաշտպանելու համար¹⁵: Ռուսաստանում և հետխորհրդային շատ երկրներում այս երևույթները հստակ դրսևորումներ ունեն:

Ա. Լիբմանն առանձնացնում է տնտեսական տարածությանն ինտեգրման վեց մոդել, որոնք կապված են այս կամ այն առաջատար խաղացողի հետ.¹⁶

- Ընդհանուր կենտրոնի մոդել. որպես հիմնական ինտեգրող ուժ հանդես է գալիս պետական մարմինը կամ կենտրոնական կառավարությունը, որը կապված չէ որոշակի տարածքի հետ:

- Միջկառավարական պայմանագրերի մոդել. արգելքները վերացվում են առանձին իշխանության տարածքային մարմինների միջև պայմանավորվածությունների հիման վրա՝ միակամության (կոնսենսուսի) սկզբունքին համապատասխան: Այս մոդելը պահանջում է իշխանության բազմաթիվ կենտ-

¹⁴ Տե՛ս **Хейфец Б.**, Модернизационная ориентация сотрудничества России со странами ЕврАзЭС и новые задачи бизнеса. „Евразийская экономическая интеграция“, №3 (12), 2011, էջ 11:

¹⁵ Տե՛ս **Либман А., Зевин Л.**, Интегрирующееся региональное пространство: дополнительные возможности экономического роста. „Евразийская экономическая интеграция“, №2(3), 2009, էջ 78:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 81:

րոնների առկայություն: Ներկայումս տվյալ մոդելն ընկած է տարածաշրջանային տնտեսական միասնացման նախագծերի մեծ մասի հիմքում՝ MERCOSUR, ASEAN և այլն:

- Գերիշխող մասնակցի մոդել. արգելքների վերացման գործառույթն իր վրա է վերցնում իշխանության որոշակի տարածքային մարմինը (ասենք՝ առաջատար երկրի կամ տարածաշրջանի իշխանությունը), որը մնացած խաղացողների նկատմամբ հարկադրման իրավունք ունի:

- Կորպորատիվ ներդրումների մոդել. որպես հիմնական ինտեգրող հանդես են գալիս խոշոր կորպորացիաները, որոնք ձևավորում են ամբողջ տարածաշրջանն ընդգրկող արտադրողական ցանցեր:

- Ոչ ֆորմալ առևտրի մոդել. խոշոր կորպորատիվ կառուցվածքների տեղը զբաղեցնում են ոչ ֆորմալ ցանցերը, որոնք միավորում են ձեռնարկատերերին և առևտրականներին ու հաճախ, գոնե մասնակիորեն, հիմնվում են ոչ լեգալ տնտեսության վրա:

- Ոչ պետական իրավունքի մոդել. ինտեգրացման հիմքում խաղի ընդհանուր կանոններն են, որոնք գիտակցաբար զարգացվում են ոչ պետական խաղացողի կողմից՝ առանձին տարածաշրջանների միջև տնտեսական փոխգործակցության կազմակերպման համար:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված մոդելներից երեքում հիմնական դերը խաղում են պետական մարմինները, մյուս երեքում իշխող են ոչ պետական խաղացողները: Այլ կերպ ասած՝ գործ ունենք ֆորմալ և ոչ ֆորմալ միասնացման մոդելների հետ:

Սովորաբար ինտեգրացիոն միավորումների ձևավորման հիմքում հանդիպում են վերոնշյալ մոդելների մեծ մասին բնորոշ գծեր՝ որոշակի մոդելը բնութագրող գծերի ավելի խիստ շեշտադրմամբ, ինչը հնարավորություն է տալիս դրանք վերագրելու այս կամ այն մոդելին:

Եվրասիական միասնացումը կողմնորոշված է եվրոպական ինտեգրման փորձի օգտագործմանը, հետևաբար՝ դրան պետք է հատուկ լինեին ԵՄ-ի ձևավորման հիմքում ընկած ընդհանուր կենտրոնի մոդելի գծերը: Սակայն տարածաշրջանի առանձնահատկություններն այնքան շատ են, որ «ԵՄ փորձի հիման վրա ձևավորվում է սկզբունքորեն նոր կազմակերպություն»¹⁷:

Եվրասիական ինտեգրման շրջանակներում ռուսական կորպորատիվ ներդրումների ծավալները գործարարության կառուցվածքներին թույլ են տալիս ինչ-որ չափով հանդես գալ որպես ֆորմալ միասնացման սուբստիտուտ: Սակայն դրանք իրենց ծավալներով, առավել ևս կառուցվածքով չեն կարող համեմատվել Հարավարևելյան Ասիայում ճապոնական և Մեքսիկայում ամերիկյան ԱՄԿ-երի կողմից կատարված ներդրումների հետ՝ մինչև այդ տարածաշրջաններում համապատասխան միասնացման միավորումների ստեղծումը:

Եթե ԵՄ-ում առկա են տարբեր պետությունների շահերի հավասարակշռման գործուն մեխանիզմներ, ապա Եվրասիական միասնացմանը բնորոշ է իշխանության ուղղաձիգը: Վերջինիս առանձնահատկությունները թույլ են տալիս այն դասել «գերիշխող մասնակցի» մոդելի շարքը: «Գերիշխող մասնակցի» մոդելը դրսևորվում է, այսպես կոչված, միջազգային աստիճանակարգման կառուցվածքում: Տվյալ մոդելը գործել է Հռոմեական կայսրություն-

¹⁷ Տե՛ս **Кавешников Н.**, Развитие институциональной структуры Евразийского экономического сообщества. „Евразийская экономическая интеграция“, №2 (11), 2011, էջ 20:

նում՝ վերահսկելով ամբողջ Միջերկրածովյան տարածաշրջանը: Եվրոպական պետությունների գաղութատիրական կայսրությունները նույնպես գործել են այդ մոդելի շրջանակներում: Մոդելի հիմքում «ոչ իրավահավասար պայմանագրերն» են, որոնք գերիշխող տերության կողմից օգտագործվում են ծայրամասի վերահսկման համար: Եվրասիական միասնացման դեպքում նույնպես անհնար է խուսափել կենտրոն-ծայրամաս մոդելին բնորոշ գծերի դրսևորումից:

Ռուսաստանին բաժին է ընկնում հետխորհրդային հանրապետությունների տարածքի ավելի քան 3/4-ը, բնակչության գրեթե 1/2-ը և ՀՆԱ շուրջ 2/3-ը: Իր այդպիսի մասշտաբներով Ռուսաստանը հայտնվում է յուրահատուկ «թակարդում»: Մի կողմից՝ ընկալվում է որպես հզոր խաղացող, որն իր կանոնները պարտադրում է մնացած խաղացողներին, ինչը նրանց վախ է ներշնչում և հետ պահում վերազգային մարմիններին իրենց ինքնավարության մի մասի փոխանցումից: Մյուս կողմից՝ Ռուսաստանը, որպես խոշորագույն խաղացող, ըստ անհրաժեշտության պետք է նախաձեռնի միասնացման գործընթացներ հետխորհրդային տարածությունում և շատ առումներով հանդես գա որպես «հովանավոր»¹⁸:

Սակայն հետխորհրդային տարածքում նման միավորումների ստեղծման Ռուսաստանի փորձերն առ այսօր հիմնականում հաջողության չեն հասել: Ենթադրվում է, որ միասնացման տարածքի երկրները պետք է օգտվեն ռուսական արդիականացված տնտեսության պտուղներից համատեղ ներդրումների, ինչպես նաև ռուսական գործարար կառուցվածքների հետ արդյունաբերական և գիտատեխնիկական կոոպերացիայի զարգացման ճանապարհով¹⁹: Հարկ է նշել, որ արդիականացման փոխգործակցության բազան շատ նեղ է: Որպես հիմնական ռուսական ներդրողներ հանդես են գալիս վառելիքահումքային, մետալուրգիական ոլորտների, ինչպես նաև բջջային կապի ընկերությունները: Ռուսաստանն ինքն է փորձում և մեծ ջանքեր գործադրում արևմտյան տեխնոլոգիաներ ձեռք բերելու և իր տնտեսությունը արդիականացնելու նպատակով: Նա հաճախ չի կարողանում հետխորհրդային երկրներին առաջարկել տնտեսական և տեխնոլոգիական լուծումներ: Իսկ դա ազդում է փոխադարձ կապերի վրա:

Խոշոր ռուսական ընկերությունները ԵվրԱզԷՍ-ի մասնակից պետություններում հաճախ ընկալվում են որպես տեղական գործարարության մրցակիցներ, քանի որ առաջինները հաճախ հակված են մենաշնորհային դարձնելու շուկան և իրենց շահերի, ինչպես նաև Ռուսաստանի քաղաքական շահերի լոբբինգ իրականացնելու²⁰: Այս իմաստով, Ռուսաստանի ներդրումային էքսպանսիան հանդիպում է քաղաքական հակազդեցության արտաքին տնտեսական կապերը բազմազանեցնելու ձգտող երկրների կողմից, մասնավորապես որ «...տվյալ տարածաշրջանի նկատմամբ ակտիվ հետաքրքրություն են ցուցաբերում այլ պետություններ, որոնք ավելի գրավիչ առաջարկություններ են անում: Հատկապես իրենց տնտեսական և վարկային փոխգործակ-

¹⁸ Տե՛ս **Головнин М.**, Перспективы многостороннего взаимодействия на постсоветском пространстве с позиций России. Информационно-аналитический бюллетень Центра проблем интеграции Института экономики РАН, 2006, №4(8), էջ 9:

¹⁹ Տե՛ս **Хейфец Б.**, Модернизационная ориентация сотрудничества России со странами ЕврАзЭС и новые задачи бизнеса, նշվ. հրատ., էջ 14:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 12:

ցությունն են առաջարկում Չինաստանը և ԱՄՆ-ը, ինչպես նաև Ճապոնիան, Ֆրանսիան, Կանադան և որոշ այլ պետություններ»²¹:

Բացի այն, որ հետխորհրդային տարածաշրջանի վերամիասնացումը չունի կայացման բավարար հիմքեր, դա նաև ապամիասնացման զգալի ներուժ ունի: Ցանկացած ինտեգրման նախագիծ ծնվում է բազմաթիվ «խաղացողների» (ինչպես պետությունների, այնպես էլ ոչ պետական գործակալների) բանակցությունների և համաձայնությունների արդյունքում: Սակայն կենսագործվելիս դրանք ոչ բոլոր դեպքերում են կայուն լինում և ավելի հաճախ գտնվում են մշտական փլուզման արտաքին և ներքին սպառնալիքների ազդեցության ներքո: Այս իմաստով, եթե ԵՄ-ն ամրապնդվել և զարգացել է արտաքին և ներքին բարենպաստ միջավայրում, ապա Եվրասիական միությունն իր ստեղծման սկզբնական փուլում արդեն իսկ ունի ապահովագրման չափազանց մեծ ներուժ: Երբ հիմնավորում ենք միասնացման առավելությունները ԱՊՀ տարածքում այս կամ այն գործոնի միջոցով (ընդհանուր ենթակառուցվածք, գործարար պրակտիկայի, մշակույթի կամ լեզվի ընդհանրություն), շրջանցում ենք այն հանգամանքը, որ ԽՍՀՄ հանրապետությունները նույնպես ամբողջի մեջ գոյակցել են այդ գործոններով, սակայն դրանք չկարողացան կանխել ապամիասնացումը:

Եվրասիական միասնացումը հաճախ համեմատվում է Եվրոինտեգրման հետ: Սակայն եթե ԵՄ-ն ունի թե՛ ֆորմալ և թե՛ ոչ ֆորմալ ինտեգրման²² բնական միջավայր, ապա Եվրասիական միության դեպքում մենք ավելի շուտ գործ ունենք միջպետական մակարդակում ֆորմալ միասնացման արհեստականորեն արագացման երևույթի հետ: Այդպիսի առանձնահատկությունը պայմանավորված է ինտեգրման նախաձեռնություններում Ռուսաստանի գերիշխանությամբ: Ըստ էության, Եվրասիական խմբավորումը ձևավորվում է ոչ այնքան որպես պետությունների կամավոր միասնացում, որքան առաջնորդ (հեգեմոն) երկրի ճնշման ներքո ձևավորվող տնտեսական տարածք:

Ցանկացած տարածաշրջանային միասնացման գործընթաց պահանջում է լուծումներ, որոնք հնարավոր են միայն մասնակիցների փոխադարձ վստահության պարագայում, իսկ վստահությունը պայմանավորվում է համագործակցության փորձով: Այս առումով, հետխորհրդային տարածքում վերամիասնացման գործընթացի արագացման ցանկացած փորձ կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Բացի այդ, ժողովրդավարության բացակայությունը տարածաշրջանի երկրների մեծ մասում լուրջ արգելք է նշված գործընթացների զարգացման համար:

Հետխորհրդային տարածաշրջանի վերամիասնացման համար չկան նաև բավարար տնտեսական հիմքեր: Այստեղ ինչպես տնտեսության կառուցվածքային, այնպես էլ ինստիտուցիոնալ բնութագրիչները խիստ տարբերվում են, ինչը փաստացի անհնար է դարձնում կառուցվածքային և արտաքին առևտրային քաղաքականության համաձայնեցման գործընթացը: Արգելակող գործոններ են ներտարածաշրջանային առևտրի ոչ մեծ կշիռը, ոչ տարածաշրջանային դերակատարների (ԵՄ, Չինաստան, ԱՄՆ, մասամբ՝

²¹ Նույն տեղում, էջ 11:

²² Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման երկու տիպ են առանձնացնում՝ միջպետական տնտեսական և միկրոմակարդակում կամ, այլ կերպ ասած, ֆորմալ և ոչ ֆորմալ: Ֆորմալն առկա է պետությունների մակարդակում, երբ վերջիններս ունեն ցանկություն, իսկ ոչ ֆորմալը՝ կորպորացիաների մակարդակում, որոնք ինտեգրված են, և հետագա զարգացումն ու աճը պահանջում են նաև ընդհանուր կանոնների մշակում և քաղաքականության համաձայնեցում:

(Թուրքիա և Իրան) էական դերը, որոնց քաղաքական և տնտեսական ներկայությունը որոշակի աստիճանով «խախտում է» ինտեգրման տարածքը:

Ազգային տնտեսությունների կառուցվածքային տարբերությունների հետ կապված հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն համաձայնեցված արդյունաբերական քաղաքականության իրականացմամբ, ինչպես նաև մաքսատուրքերի փոփոխության արդյունքում ազգային բյուջեների և առանձին արտադրողների կորուստների ծածկմանն ուղղված փոխհատուցման ընդհանուր հիմնադրամներից միջոցների տրամադրմամբ: Բայց այս հիմնախնդիրները գրեթե անլուծելի են, քանի որ այդպիսի հիմնադրամների ձևավորման համար պահանջվում են մեծ ծախսեր՝ առաջին հերթին Ռուսաստանի՝ որպես առանցքային ներդրողի և տարածաշրջանի ամենամեծ տնտեսություն ունեցող երկրի կողմից: Սակայն Ռուսաստանը պատրաստ չէ նման զոհողությունների:

Ազգային տնտեսությունների կառուցվածքների միջև տարբերությունը սահմանափակում է համատեղ նախագծերի իրագործման հնարավորությունները: Նկատելի են Ռուսաստանի կողմից վառելիքաէներգետիկ համալիրի ճյուղերն առաջին պլան մղելու եսասիրական փորձեր, որ պարունակում է նաև զգալի թաքնված հակամարտային ներուժ: Ռուսաստանն աշխատում է միավորումը ծառայեցնել իր տնտեսական շահերին, ինչը հետխորհրդային տարածաշրջանում նրա նախաձեռնած միասնացման հիմնական դրդապատճառն է: Իսկ նշված անհամասնությունները հիմք են ստեղծում միության ոչ հավասարաչափ զարգացման՝ կենտրոնի և ծայրամասի ձևավորման համար:

Այս ամենը Եվրասիական նախագծին Հայաստանի մասնակցությունը դարձնում է շատ վտանգավոր և ռիսկային ազգային շահերի տեսանկյունից:

АШОТ ЕГИАЗАРЯН

Доцент кафедры „Микроэкономики”
АГЭУ, кандидат экономических наук

Евразийский таможенный союз. Возможности или опасный тупик?- В статье сделана попытка выявления целей создания Таможенного союза, а затем обсуждены вопросы, касающиеся основных препятствий на пути становления и расширения союза. В частности представлены структурные, торговые и институциональные препятствия. В третьем разделе статьи дана оценка потенциала становления регионального интеграционного объединения, с позиций модели доминирования и воздействия дезинтеграционных факторов. В конце сделаны выводы, которые с позиций национальных интересов говорят об опасности и рискованности соединения Армении к Таможенному союзу.

ASHOT YEGHIAZARYAN

Associate Professor at the Chair of
“Microeconomics” at ASUE, PhD in Economics

Eurasian Customs Union: Opportunity or Dangerous Deadlock?- The article attempted to identify the objectives of creating the Customs Union, and then discusses issues relating to the major obstacles to the establishment and expansion of the Union. In particular, structural, commercial and institutional obstacles are presented. In the third section of the article the potential of becoming a regional integration unification from positions of the model of domination and influence factors of disintegration are assessed. At the end conclusions are made which from the positions of national interests say about the dangers and risk of Armenia’s joining the Customs Union.

